ԱՇԽԱՐՀՆ որ յանուն Հայկայ հեղինակի ազգիս և լեզուիս՝ յորում գրի բանս, կոչի ՀԱՅՔ և ՀԱՅԱՍՏԱՆ 'ի բնիկ ժողովրդենէն, իսկ յօտարաց ԱՐՄԵՆԻԱ կամ ԱՐՄԻՆՔ, յանուն հայկածին նահապետացն Արմենակայ և Արամայ, և կամ ըստ պանծանաց բնակչացն առաջնոց՝ երբեմն Արի-արանց երկիր. իսկ ըստ Սրբազան գրոց Երկիր ԱՐԱՐԱՏԱՑ. զետեղեալ կայ գրեաթէ 'ի միջավայր հնոյ աշխարհի, յասիականն բաժնի, ընդ մէջ կրկին միջերկրեայ ծովուց, Եւքսինեայ և Կասբից, ձգեալ տարածեալ երբեմն մօտ ցեզերս ծովուն մեծի, որ է բուն Միջերկրականն. բայց բնիկ սահմանք Հայոց որ և ՄԵԾ ՀԱՅՔ, յորոշումն փոքուն և այլոց աշխարհաց՝ որոց յետոյ տիրեցին, ամփոփին ընդ մէջ 36° 40′ և 41° 50′ աստիճանաց հիւսիսական լայնութեան. և ըստ արեւելեան աստիճանաց երկայնութեան միջօրէին Բարիզու յ'36° է ց'47°, որ է ըստ արարատեանն Մասեաց երկայնութեան 6° ընդ արեւմուտս և 6° ընդ արեւելս:

2. Ըստ եդելոց սահմանացդ սահմանին Մեծ Հայք՝ յարեւմտից կողմանէ հարաւախառն Եփրատ գետով, որ անջրպետէն ընդ փոքր Հայս, 'ի կողմանց Սեւերակայ ցԱկն. անտի և 'ի վեր լերինք Անտիտաւրոսի անջրպետեն ընդ կրկին Հայս ցսահմանս Պոնտոսի. յորմէ առնու հիւսիսային սահմանն ոլորեալ առ Եգերօք (Աճարա) և Վրօք և Կուր գետով, մինչև 'ի Կովկաս լերինս ընդ արեւելս կոյս. և յայսմ կողմանէ սահմանի նովին գետով և լերամբք և ծովուն Կասբից, և խոնարհագոյն՝ Գիլան և Ատրպատական աշխարհօք. իսկ 'ի հարաւոյ՝ հնով աշխարհաւն Մարաց և նորով պարսիկ Քրդաստանաւ, և Ասորեստանեօք այսինքն՝ ըստ հիւսիսոյ Մուսուլ նահանգի ցՃէզիրէ, և Միջագետօք՝ ըստ հիւսիսոյ Մծբնայ և Մարտինայ ցՏիարպէքիր և ցաշխարհն Եփրատացւոց և ցնոյն գետ՝ յարեւմուտս կոյս, մինչև 'ի կողմանս Սեւերակայ, ուր և բոլորին սահմանքն: — Մեծածիգ երկայնութիւն աշխարհին Հայոց յարմըկանէն Եփրատայ որ ընդ մէջ Մելիտինեայ՝ 'ի փոքր Հայս, և Մատէնի՝ 'ի Մեծ Հայս, յարեւմտից ընդ արեւելս ձգի ցբաղուն Բագուանայ, այն է Պաքու, յեզր Կասպիականին, իբրև ընդ 580 մղոն աշխարհագրական. և լայնութիւն 'ի հիւսիսոյ 'ի Կուր գետոյ առ Ազգորաւ՝ ցՄէրհէմէդապատ և ցՔաշավէր քաղաքաւանս 'ի հարաւոյ ծովուն Որմիոյ ընդ մղոնս իբրև 340: — Միահամուռ տարածութիւն երեսաց երկրի հնդետասան սեփական աշխարհաց Հայոց Մեծաց, և յարակից աշխարհացն՝ Խաղտեաց 'ի հիւսիսի արեւմտից, Աղուանից յարեւելս և Ատրպատականի ընդ արեւելս հարաւոյ, լինի իբրև 120,000 քառակոյս մղոն: